

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

7-րդ դասարան

Աքայական խոսքը մեր կմնա հավետ...

Վահան Տերյան

1. Դերանվան ո՞ր տեսակը կա Համո Սահյանի «Անտառում» բանաստեղծության տրված հատվածում. ընդգծի՛ր ճիշտ պատասխանը (1 միավոր):

Անտառում ամպի ծվեններ կային,
Կապույտ մշուշներ կային անտառում.
Օրոր էր ասում աշունն անտառին,
Բայց դեռ անտառի քունը չէր տանում:

Շշուկներ կային անտառում այնքա՛ն
Եվ խոնավ-խոնավ բուրմունքներ կային...
Իրար փաթաթված ստվեր ու կաճան,
Ու հետքե՛ր, հետքե՛ր, հետքե՛ր մարդկային:

- ա) անձնական գ) փոխադարձ
բ) ցուցական դ) հարաբերական

2. Պատկերավորման ի՞նչ միջոց է կիրառել բանաստեղծը առաջին քառատողի վերջում: Ապացուցի՛ր տեսակետդ. մեկ այլ օրինակ էլ ի՛նքդ բեր (4 միավոր):

3. Բանաստեղծական հատվածի ո՞ր բառերի փոխարեն կարելի է գործածել *նիրհ, քույր, բայ, տամուկ, շավիղ, ծմակ* բառերը. գտի՛ր դրանք և գրի՛ր տրված բառերի կողքին (3 միավոր, -0,5):

4. Բանաստեղծության տեքստից գտի՛ր և դո՛ւրս գրիր այն բառերը, որոնք տրված բառերի արմատն են դարձել՝ *տմարդի, բեռնատար, շրջակայք, բնօրրան, քներակ, տաղասաց* (3 միավոր, -0,5):

5. Բանաստեղծության հատվածում գտի՛ր և դո՛ւրս գրիր այն բառերը, որոնք սկսվում են գաղտնավանկով. երկու այդպիսի բառ էլ դո՛ւրս գտիր (3 միավոր, -0,5):



ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՃԵՄԱՐԱՆ
« ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԲԱՑ ՕԼԻՄՊԻԱԴԱ »

2015 – 2016

